երևում է Հ. Նիկոդիմի վերոյիշեալ առաջարկութիւնը արձագանք է գտել ս. Սինոդի կողմից։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Թէ որչափ է օգտուում դեռ կաթոլիկ եկեղեցին Ֆրանսիայի հովանաւորութիւնից իւր ազդեցութիւնը տարածելու համար արևելքում, երևում է «Бирж. Вѣд.» Պարիզի թղթակցի «Ֆրանսիայի կրօնական հովանաւորութիւնն արևելքում» յօդուածից։ Ֆրանսիական կառավարութեան պաշտպանութեան շնորհիւ այսօր եզուիտական կրօնական կարգերը հետևեալ հաստատութիւններն ունին Տաճկաստանի քաղաքներում. հիւանդանոց, ապաստանարան, մանկանոց՝ Կ. Պոլսում, Ադրիանապոլսում, Սալոնիկում, Զմիւռնիայում, Երուսաղէմում, Բեթղէհէմում, Եաֆֆայում, Բայրութում և Տրիպոլսում։

Ուսումնական հաստատութիւններից յիշելի է Երուսաղէմում արևելագիտութեան բարձրագոյն ուսումնարանն իւր սեմինարիայով, ուր արևելեան քրիստոնեաներին կաթոլիկ դարձնելու եղանակն են ուսուցանում. Միևնոյն տեղում կայ աստուածաբանական դիտութիւնների դպրոց։ Բէյրութում կայ եզուիտների հիմնած բժշկական ֆակուլտետը։

Պոլսում, Ադրիանապոլսում, Սալոնիկում, Զմիւռնիայում, Բէյրութում, Հալէպում, Բեթղեհէմում, Ռոդոսում, և այլն, ունին լիկէոններ, կոլլեջներ, պանսիոններ ու տարրական դպրոցներ։

Բացի այս Ֆրանսիայի հաշուով և նորա հովանաւորութեան ներքոյ հայ կաթոլիկներն ևս ունին եկեղեցիներ և ուսումնական հաստատութիւններ հետևեալ քաղաքներում. Պոլիս, Բէյրութ, Էրզէրում, Էնկիւրի, Հալէպ։ Ասորիքի կաթոլիկները Հալէպում և Դամասկոսում ունին նոյն տեսակ հաստատութիւններ։ Այս բոլորի վերայ Ֆրանսիական կառավարութիւնը տարեկան ծախսում է մէկ միլիոնի չափ դրամ։

1902 թուի համար նախահաշիւ կազմող յանձնաժողովը պետական ծախսերի վերայ աւելացրել է և այս հաստատութիւնների վերայ լինելիք ծախսերը, որոնք և պալատում ձայների մեծամասնութեամբ ընդունուեցան։

Ապա թղթակիցը պատգամաւորների ժողովում հետևեալ խօսքերն է մէջ բերում, որոնք վերաբերում են Արևելքում Ֆրանսիայի ազդեցութիւնը զօրեղացնելու եղանակին։ «Արդեօք աւե-

լի տրամաբանական, հետևողական և նպատակայարմար չէ՞ը լինի, եթէ այսուհետև այնպիսի հաստատութիւնների միջոցով ազգենք, որոնք աւելի աշխարհական բնաւորութիւն ունին, այն է՝ դպրոցների, հիւանդանոցների, և որոնց մէջ կարողանային մտնել մահմետականներ ևս, որոնք քրիստոնէութիւն ընդունելու ցանկութիւն չունին, կամ մտնէին այնպիսի քրիստոնեաներ, որոնք կաթոլիկութեան սէր չունին։ Գուցէ առարկեն, թէ դա մեր հովանաւորութեան խնդրին հարուած կլինի։ Մեր հովանաւորութիւնն էք ասում... Հայաստանի անողորմ կոտորածից յետոյ մեր հովանաւորութեան խնդիրը վերջացած պէտք է համարել»։

Լևոն ԺԳ. Պապը իւր յոբելեանի առթիւ մարտ ամսի առաջին հինգ օրը հինգ հարիւր յիսուն հազար (550,000) շնորհաւորական հեռագիր է ստացել և երկու միլիոնից աւելի նամակներ։ Այս բոլոր թղթերը առ այժմ մի սենեակի մէջ են, և նոցա քննելու համար գոնէ երեք ամիս ժամանակ է հարկաւոր։ —Հռոմի լրագիրները հաղորդում են, որ պապը մի նոր շրջաբերական է հրատարակել, որ կարելի է նորա կտակը համարել։ Նա սկսում է Աստծուն գոհութիւն յայտնելով իրեն երկար կեանք պարգևելու համար և նորից կաթոլիկներին խրատներ է կարդում՝ ցաւակցութիւն յատնելով եկեղեցու դէմ եղած յարձակումների համար։ Նա յիշում է ամուսնալուծութեան մասին եղած օրէնսդրութիւնը իբրև ժամանակակից մոլորութիւններից մէկը, և արդի հասարակութեան պատկերը գծելով՝ համոզում է, որ բոլորը դէպի Քրիստոս և հռոմէական աթոռը վերադառնան, որովհետև միայն այդ կարող է աշխարհի բարօրութիւնը և խաղաղութիւնը ապահովել։

— Ներկայումս Ֆրանսիայում մի բաւական աչքի ընկնող շարժում է սկսուել։ Կղերականութեան, հեռևաբար և պապականութեան՝ կատաղի թշնամիներից մէկը Ֆրանսիայում ամբողջ լուսաւոր աշխարհին յայտնի „Revue des deux Mondes“ լրագիրն էր։ Իւր կիսադարեան գոյութեան ընթացքում այդ հանդէսը շատ դառնութիւններ է պատճառել պապին։ Այդ յարաբերութիւնը փոխուեց անուանի Բրիւնետիերի խմբագիր դառնալուց յետոյ, որ հանդիսի հիմնադրի որդին է։ Հանդիսի էջերում սկսեցին երևալ աւելի և աւելի ջերմ յօդուածներ յօգուտ պապականութեան, և այն տեղը հասաւ, որ ինքը Բրիւնետիերը «Ռուսաստանը և Ս. Աթոռը» վերնագիրը կրող մի յօդուած գրեց, ցոյց տալու համար, որ Ռուսաստանը խաղաղութիւն և անդորրութիւն կգտնէ միայն Հռոմի աթոռի հետ դաշն կապելով։ Սակայն այս ոգևորութիւնը շատ երկար չտևեց։ Դէպի Հռոմ

կատարած ուխտադնացութիւնից նա այնպիսի տպաւորութիւններ էր ստացել, որ հասկացաւ իւր սխալը, և պապականութիւնից Ֆրանսիային հասած նեղութիւնները կշռելով, փորձեց «Ֆրանսիական ազգային եկեղեցու» գաղափարը վերակենդանացնել։ Ահա այդ նորութիւնն է, որ այժմ շատերին հետաքրքրում և հետևողներ է գտնում։

—„Новости" լրագրի թղթակիցը յայտնում է, որ Վատիկանում եռանդուն կերպով պատրաստութիւններ են տեսնում Լեոն ԺԳ-ի գահակալութեան 25-ամեակը տօնելու համար։ Եւրոպական տէրութիւնների կողմից արտակարգ դեսպանութիւնների են սպասում, և մինչև իսկ ասում են, որ Անգլիան էլ այդ հանդէսներին իւր ներկայացուցիչը կուղարկայ։—Յոբելեանի հանդէսները սկսուել են փետրուարի 20-ին (ն. տ.)։ Այն ինչ, իսկապէս, պապի քսան և հինգ ամեակը լրանում է մի ամբողջ տարի յետոյ, այն է 1903 թ. փետր. 20-ին։ Սովորաբար պապական յոբելեանները տօնւում են և երկարատև են լինում այն ժամանակ, երբ Վատիկանի գանձարանը դատարկ է։ Եւ իրօք յոբելեանները մեծապէս նպաստում են գանձարանը լցնելու։ Այս յոբելեանն էլ նոյնպիսի նպատակ ունի, և կարդադրիչ յանձաժողովը կաթոլիկ եկեղեցիներում ուխտաւորների խմբերը է պատրաստել, այն յուսով, որ սրանք հետերը զանազան թանկագին ընծաներ կբերեն պապին։

Գերմանացի եպիսկոպոսներն ևս դիմումներ են արել իրենց հօտին—չենայել կոպէկները ս. Պետրոսի փոխանորդի գանձարանի համար։ Բայց գերմանական մամուլը այնքան էլ լաւ աչքով չի նայում եպիսկոպոսների այդ վարմունքի վերայ, որովհետև դեռ երկու տարի առաջ նոր դարամուտի առթիւ պապը յոբելեան տօնեց, որ ամբողջ տարի տևեց. եպիսկոպոսների հրաւէրների ազդեցութեան տակ գերմանացի ժողովրդի աշխատած միլիոնները պապի գանձարանը մտան. մեթէ՞, ասում են լրագիրները, այդպիսի կողոպուտի նորից պիտի ենթարկուի գերմանացի ժողովուրդը։ Ինչ էլ որ գրեն լրագիրները, ուխտաւորները լիքը գրպաններով հոսում են դիմում պապին աղօթելու համար, որին ներկայացնում են իրրև մարմնացած Աստուած երկրիս վերայ։

Այս մասին անցեալներում բանակռիւ սկսուեց կաթոլիկների և բողոքականների մէջ, և վերջինները ապացուցեցին, որ բարեպաշտ կաթոլիկների մէջ մինչև այժմ էլ պապին ուղղուած աղօթքների գիրքը մեծ յարգ ունի։

— Պապի անսխալականութիւնը պաշտպանելով հանդերձ՝ Վատիկանում գոյութիւն ունի մի աւելի մեծ «անսխալական իշ-

խանութիւն, որը մեղսական բծեր է գտնում նոյն իսկ պապերի անսխալականութեան մէջ։ Եւ այս պատահել է հէնց Լեոն ԺԳ.-ի հետ։ Լեոն ԺԳ.-ի կողմից նշանակուած յանձնաժողովը, որ քննում էր արգելուած գրքերը, ի զարմանս ամէնքի տեսաւ, որ այդ արգելուած գրքերի մէկի հեղինակը Լեոն ԺԳ. է։ 1874 թուին, երբ պապը Ցովակիմ Պեչչի էր կոչւում և Պերուջիայի արքեպիսկոպոս էր՝ «Ս. Կոյսի սրբազան արեան մասին» վերնագրով մի գիրք հրատարակեց։ Ցանձնաժողովը այդ գրքում մի հերետիկոսութիւն գտաւ և 1875 թ. այդ գիրքը արգելուած գրքերի շարքը մտաւ։ 1878 թ. Ցովակիմ Պեչչին պապ ընտրուեցաւ, իսկ նորա գիրքը արգելուած էլ մնացբաւականացան միայն հեղինակի անունը ջնջելով։

—Իտալիայում եկեղեցու և թագաւորութեան մէջ եղած կռիւը վերջին ժամանակներս աւելի սուր կերպարանք ստացաւ շնորհիւ այն հանգամանքի, որ Վատիկանը ամուսնալուծութեան հարցի մէջ հէնց սկզբից վճռական և բարձր ոճով սկսեց խօսել։ Կաթոլիկ հոգևորականութիւնը պապի անունով մի զօրեղ արշաւանք է սկսել կառավարութեան ամուսնական հարցի վերաբերմամբ հրատարակած նոր կանոնադրութեան դէմ, և այդ արշաւանքը մեծ յաջողութիւն է ունենում հարաւային Իտալիայում, ուր կառավարութեան այս նորմուծութիւնը համակրողներ չի գտնում։ Ինչպէս ասում է թղթակիցը, այս կանոնադրութիւնը հաւանականօրէն նախարարութեան բաւական գլխացաւանք կպատճառէ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

1847-ից ի վեր Ֆրանսիայում հաստատուած կայ մի մեծ ընկերութիւն, որի տիտղոսն է Société Centrale protestante d'Evangélisation (բողոքական կենտրոնական ընկերութիւն աւետարանի տարածման համար)։ Նրա գործունէութեան շրջանի մէջ են բուն Ֆրանսիայում 71 նահանգ, իսկ Ալժիրում ֆրանսիական 4 գաղութ։ Ներկայումս այդ ընկերութիւնն ունի 180-ից աւելի քահանայ և աշխարհական քարոզիչներ։ Նրա տարեկան բիւդջէն դեռ ևս 1901-ին բարձրանում էր 457956 ֆր.-ի։

Այս ընկերութիւնը վերջին 8 տարիների ընթացքում հիմնել է զանազան տեղերում 34 կայան. իսկ ներկայումս հետամուտ է հաստատուն դիրք գրաւելու Դորդոնիը, Լոտ, Գէրս և Ժիրոնդ նահանգներում։